ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1414 26.05.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիս ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի ՁՊՎ և արձանագրվել է.

Թերություններ՝

ՁՊՎ-ի խցերից մեկը ծառայում էր, որպես հերթապահ ոստիկանի հանգստի սենյակ, իսկ բուժենյակը ըստ վարչակազմի բանավոր խոսքի մեկ – մեկ օգտագործվում է նաև որպես խուց՝ շատ անձիք ունենալու դեպքում:

Սանհանգույցում բացակայում էր հիգիենիկ թուղթը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ № 4131
«27» 05 2014թ.

Խախտումներ՝

Դիտորդական խումբը, երբ ցանկացավ տեսնել ՁՊՎ-ում պահված անձի հարազատներին տեղաշարժի վերաբերյալ նրա ընտրած անձին հեռախոսակապի միջոցով իրազեկման արձանագրությունը, հերթապահ մասի պետը մեկնաբանեց, որ դրանք պահվում են անձնական գործերում և չտրամադրեց, բայց բերեց մեկ անձնական գործ, որպեսզի ցույց տա, որ գործերում դրանք առկա են և Դիտորդական խումբը կրկին համոզվեց, որ իրազեկումները չեն կատարվում, քանի որ տվյալ գործում բացակայում էր իրազեկման արձանագրությունը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 2142
27 05 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Խնդրում ենք յուրաքանչյուր ՀՊՎ-ին վերաբերող գրությունը չմիավորել մեկ գրության մեջ այլ տալ առանձին- առանձին մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1541 << 26 >> 06 2014թ.

Ձեր 26.05.2014թ. թիվ 2621/1414 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. մայիս ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները և թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Սյունիքի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. ՁՊՎ-ն ունի մեկ տեղանոց 2 խուց և ոստիկանի հանգստի 1 սենյակ, որի դռան վրա փակցված է <<ոստիկանի հանգստի սենյակ>> գրառումը, սակայն այն իր կառուցվածքով ու կահավորվածությամբ լիովին համապատասխանում է խցի չափանիշներին: Երկուսից ավել ձերբակալված կամ կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելու դեպքում, որպես երրորդ խուց օգտագործվում է ոստիկանի հանգստի սենյակը, այլ ոչ թե բուժսենյակը, որն ամբողջությամբ կահավորված է բուժօգնության համար նախատեսված գույքով:
2. Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն <<ձերբակալվածներին անհատական օգտագործման նպատակով ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում տրամադրվում է հիգիենիկ թուղթ>>, սակայն չի նշվում թե այն որտեղ պետք է դրվի: Հետևաբար Գորիսի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձանց այն տրամադրվում է խցերում, որը դիտորդների խմբի այցելության ժամանակ առկա է եղել:

Խախտում.

Համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 11-րդ կետի՝ ձերբակալված և կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին ՁՊՎ վարչակազմը կապի հնարավոր միջոցով տեղյակ է պահում վերջիններիս կողմից ընտրած անձին և այդ մասին կազմում տեղեկանք, իսկ ՁՊՎ ընդունվող անձանց կողմից հեռախոսահամար չտրամադրելու դեպքում կազմվում է արձանագրություն, որոնք դրվում են անձնական գործում: Ի դեպ հերթապահ մասի պետի կողմից դիտորդների խմբին ներկայացրած անձնական գործում առկա է եղել

նշված արձանագրությունը, որը կազմվել է առ այն, որ ձերբակալված Հ.Մ.Ավագյանը հրաժարվել է հեռախոսահամար տրամադրելուց:

Այնուամենայնիվ դիտորդների խումբը վերը նշված արձանագրությունը տեսնելուց հետո անհասկանալի պատճառներով հաշվետվությունում նշել է, որ -<<իրազեկումներ չեն կատարվում, քանի որ տվյալ գործում բացակայում էր իրազեկման արձանագրությունը>>, ինչը չի համապատասխանում իրականությանը:

ՀՀ ոստիկանության շտաբ